ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ Արմավիրի մարզ , Խոյ համայնք , գյուղ Գեղակերտ

16 հունվարի 2025 թ.

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն 1

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՐԱԶԵԿՄԱՆ 1-ԻՆ ՓՈՒԼԻ

2025 թվականի հունվարի 16-ին՝ ժամը 15:00-ին, ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Գեղակերտ բնակավայրի երիտասարդական կենտրոնում տեղի ունեցավ հանրային լսում՝ Խոյ համայնքում 2025 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացի իրազեկման նպատակով:

Հանրային քննարկմանը ներկա էին Խոյ համայնքի ավագանու անդամները, Խոյի համայնքապետարանի աշխատակազմի ոլորտային ներկայացուցիչները, ինպես նաև մեծ թվով երիտասարդներ: Մուտքի խոսքով հանդես եկավ Խոյի համայնքապետարանի աշխատակազմի Արտաքին կապերի, զարգացման ծրագրերի, տուրիզմի, սպասարկման բաժնի պետ Անի Սարգսյանը, ով մանրամասն ներկայացրեց 2025 թվականի մասնակցային բյուջետավորման ողջ գործընթացը: Հանդիպման ընթացքում տեսասահիկով ցույց տրվեց առաջարկների ներկայացման հայտի օրինակելի ձևը և ներկայացվեց այն բոլոր չափանիշները, որոնք պետք է պահպանել առաջարկը ներկայացնելիս: Մանրամսան ցույց տրվեց կայքում ողջ գործընթացի ապահովման համար հասանելի բաժինները և գրանցման ընթացակարգերը, ներկայացվեցին ժամկետները:

Համայնքապետարանի ներկայացուցիչները պատասխանեցին երիտասարդների կողմից բարձրացված մի շարք հարցերի, որոնք վերաբերվում էին ծրագրային առաջարկների բյուջեներին, քվերակության կարգին և առաջրկների տեսանելիությանը: Եղան մտքերի փոխանակություն:

Հանրային քննարկման ընթացքում երիտասարդները մեծ հետաքրքրություն ցուցաբերեցին գործընթացի նկատմամբ՝ բարձր գնահատելով ընձեռնված հնարավորությանը մասնակցելու Խոյ համայնքի զարգացմանը:

Հանձնաժողովի նախագահ՝ Գրապիոն Շառոյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Անի Թադևոսյան